ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 794 - Ա

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ և 16-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի N 1450-Լ որոշման N 2 հավելվածի 15-րդ կետով՝

1. Մասնավոր նախաձեռնությամբ ներդրումային ծրագրերի և դրանց իրականացման ընթացքում ի հայտ եկող խնդիրների լուծմանն ուղղված քննարկումների համակարգման և մշտադիտարկման, ինչպես նաև ներդրումների ներգրավմանը և խթանմանն առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ներդաշնակեցմանն ուղղված քննարկումների իրականացման նպատակով ստեղծել ներդրումային ծրագրերին աջակցող միջգերատեսչական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ պետական կառավարման համակարգի մարմիններից ստացված ներդրումային ծրագրերը ներկայացվում են հանձնաժողովի քննարկմանը «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի միջոցով:

3. Սահմանել, որ հանձնաժողովն իր կատարած աշխատանքների վերաբերյալ տարեկան ամփոփ տեղեկատվություն է հրապարակում www.gov.am կայքում մինչև հաջորդ տարվա փետրվարի 20-ը:

4. Սահմանել, որ հանձնաժողովի աշխատակարգը հաստատում է հանձնաժողովն առաջին նիստի ընթացքում:

5. Հանձնաժողովի անդամներին՝

1) հանձնաժողովի աշխատակարգով սահմանված կարգով ապահովել մասնակցությունը հանձնաժողովի աշխատանքներին.

2) հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել ներդրումների ոլորտի կարգավորմանն ուղղված և համակարգային խնդիր պարունակող իրավական ակտերի նախագծերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.09.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ